ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

09 հուլիսի 2013 թվականի N 58-Ա

ք. Հրազդան

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի մարտի 7-ի N 67-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում 2013 թվականի մարտի 11-ից մինչև մարտի 13-ը իրականացված ներքին աուդիտի արդյունքները և *Մ. Պետրոսյանի* գրավոր բացատրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն *Մարինե Պետրոսյանի* նկատմամբ կիրառել <<*նկատողություն*>> կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ